

ՄԱՐԳՈՅԻ ԻՍՐԱՅԵԼԵԱՆ

(1909-1997)

1997 թ. Մարտի 13ին, վախճանուեց անուանի ուրարտագէտ, հնագէտ, ազգային-հասարակական գործիչ՝ Մարգոյ Իսրայէլեանը:

Մարգոյ Աւագի Իսրայէլեանը ծնուել է 1909 թ. Թիֆլիսում, արհեստաւորի բազմանդամ ընտանիքում:

1929 թ. տեղի մանկավարժական թեքումով հայկական թիւ 72 դպրոցն աւարտելուց յետոյ, մօտ երեք տարի հայոց լեզու եւ գրականութիւն է դասաւանդել քաղաքի հայկական դպրոցներից մէկում:

1932 թ. Վրաստանի լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատի (Լուսժողկոմ) յատուկ գործուղմամբ, ընդունում եւ 1937 թ. գերազանցութեամբ աւարտում է երեւանի պետական համալսարանի Պատմաբանասիրական բաժինը: Լսելով մեծ եղբօր ձերբակալութեան լուրը, հրաժարում է ասպիրանտուրա մտնելու առաջարկից եւ քաղաքական հետապնդումների հետեւանքով որբացած ընտանիքին ձեռք մեկնելու նպատակով վերադառնում է Թիֆլիս, աշխատանքի անցնում՝ տեղի հայկական դպրոցներում:

1940 թ. այնուամենայնիւ ընդունում է երեւանի պետհամալսարանի ասպիրանտուրան, ակադ. Գրիգոր Ղափանցեանի ղեկավարութեամբ խորանում ուրարտագիտութեան մէջ:

1943-49 թթ. հայոց լեզու եւ ուրարտերէն է դասաւանդել երեւանի համալսարանում, զուգահեռաբար, 1944-45 թթ. աշխատել նախ՝ Հայաստանի պատմութեան պետական թանգարանում, ապա՝ 1946-49 թթ. Հայաստանի Գիտ. ակադեմիայի Լեզուի ինստիտուտում, որտեղ եւ փայլուն կերպով պաշտպանում է թեկնածուական ատենախոսութիւնը («Պատմական Արմաւիրը ըստ ուրարտական արձանագրութիւնների»):

1949-80 թթ. աշխատել է Հայաստանի ԳԱ Պատմութեան ինստիտուտում, 1980 թուականին հրավիրուել է գլխաւորելու Հայաստանի կառավարութեանն առընթեր Պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների պահպանման ու օգտագործման գլխաւոր վարչութիւնում իր իսկ առաջարկութեամբ հիմնուած Ուրարտագիտութեան բաժինը:

Ուրարտերէնի քաջիմացութիւնը զուգակցելով պրակտիկ հնագիտութեանը եւ տիրապետելով ուրարտագիտութեան մէջ խորանալու համար խիստ անհրաժեշտ գերմաներէն, ոռուերէն, նաեւ վրացերէն լեզուներին, գիտութեան շեմը ոտք դրած երիտասարդ գիտնականը կարճ ժամանակում կարողանում է դառնալ համընդունելի հեղինակութիւն՝ տարիներ շարունակ համարուելով ուրարտերէնի լաւագոյն գիտակը Հայաստանում:

1950 թ. Մ. Խորայէլեանը վերծանում է նոյն թուականին յայտնաբերուած էրեբունիի հիմնարկման յայտնի արձանագրութիւնը՝ առաջ քաշելով այս տեսակէտը, որ Երեւանի անունը ծագում է էրեբունից: Սոյն տեսակէտը յետագայում դարձաւ տիրական եւ դրա հիման վրայ 1968 թ. մեծ շուրջով տօնուեց Երեւանի 2750ամեակը:

Ականաւոր հնագէտը մասնակցել է Հայաստանի տարբեր բնակավայրերի պեղումներին, նկարագրել բազմաթիւ հնավայրեր, գտածոյ յուշարձաններ, տուել ուրարտերէնի որոշ քանակութեան քերականական ձեւերի բացատրութիւնները, ճշգրտել բազմաթիւ բառերի իմաստները, արդէն իսկ հրատարակուած մի խումբ արձանագրութիւնների տեքստային տառադրաժութիւնների մէջ կատարել էական շտկումներ, առաջարկել դրանց իմաստային նոր թարգմանութիւնները:

Անուանի հնագէտը վերծանել է նաեւ մինչ այդ անյայտ գաղափարագրեր, կատարել դրանց գիտական թարգմանութիւնները, ճշտել գրականութեան եւ արձանագրութիւնների մէջ վկայուած առանձին բնակավայրերի տեղադրութիւնը: Հնավայրերի պեղման եւ ուսումնասիրութեան բնագաւառում նրա գործունէութիւնից յատկապէս նշելի է էրեբունիի պեղումների ընթացքում ուրարտական «Սուսի» կոչուող տաճարի յայտնաբերումը, չափագրութիւնը եւ պաշտամունքային այդ յուշարձանի կառուցուածքի ու նշանակութեան ճշտումը: Սուսիի պեղումների ընթացքում նա յայտնաբերել եւ ուսումնասիրել է բազմաթիւ որմաններներ, բացայատել դրանց նշանակութիւնը իսկ տաճարի պատերի մէջ գտնուած երկու նոյնական արձանագրութիւնները վերծանելով, ի յայտ է բերել ուրարտական դիցարանի՝ մինչ այդ գիտութեանն անյայտ իւարչա

աստծոյ անունը, որը բացակայում է ուրարտական դիցարանը ներկայացնող Վանի «Մհերի դռան» յայտնի արձանագրութեան մէջ:

Մ. Իսրայէլեանը կազմել, նկարագրել ու գիտական ծանօթագրութիւններով օժտել է տարբեր վայրերից յայտնաբերուած՝ գիտութեանը յայտնի ուրարտական բոլոր սեպագիր արձանագրութիւնները (աւելի քան 450 միաւոր): Այդ արձանագրութիւնների յոյժ կարեւոր ու եղակի ժողովածուն (45 մամուկ) գիտնականի գլուխ գործոցն է եւ ցաւօք դեռեւս անտիպ:

Տպագրել է «Երեբունի բերդ-քաղաքի պատմութիւն» մեծարժէք աշխատութիւնը (Երեւան, 1971 թ.), գիտական եւ ընթացիկ մամուլում հրատարակել է մօտ 30 գիտական, նոյնքան էլ հրապարակախօսական յօդուածներ: Ձեռագիր է թողել մէկ տասնեակի չափ ուսումնասիրութիւններ, որոնց մէջ «Հայ հին արեւելագէտները», «Արարատեան դաշտի հնագոյն քաղաքները»: Ի՞ «Պատմական Արմաւիրը» ըստ ուրարտական արձանագրութիւնների», «Արգիշթի Ա.ի տարեգրութիւնները», «Ուրարտագիտութեան պատմութիւն» եւ այլն:

Մ. Իսրայէլեանը իր գիտական ու քաղաքական տեսակէտները պաշտպանող վերին աստիճանի սկզբունքային մտաւորական, հասարակական գործիչ եւ քաղաքացի էր: Նա երբեք չընկըկեց իր ժամանակներում սովորական դարձած ճնշումների եւ սպառնալիքների առաջ, որեւէ զիջումով ետ չկանգնեց իր համոզումներից ու դիրքորոշումներից: Նրա բնաւորութեան ու գործելակերպի այս գիծը դրսեւորուեց գեռեւս իր գիտական գործունէութեան սկզբնական շրջանում, եղր Մառի լեզուագիտական հայեացքները քննադատելու եւ իր ուսուցիչ Գրիգոր Ղափանցեանի տեսակէտները պաշտպանելու մեղադրանքով, Հայաստանի կոմկուսի կենտրոմի բիւրոյի որոշմամբ, 1949 թ. Ակադեմիայի լեզուի ինստիտուտում զբաղեցրած պաշտօնից հետացուեց: Թէեւ մի քանի ամիս անց, երբ իշխանութիւնները «Հակ» հանեցին նաեւ Մառին, Մ. Իսրայէլեանի իրաւունքները վերականգնուեցին, բայց նա միշտ ընդդիմացաւ իշխող կուսակցութեան քարոզած գաղափարախօսութեանը եւ իրագործած քաղաքականութեանը (այդ պատճառով մեծ դժուարութիւններ յաղթահարելով էր տպագրուած իր գիտական յօդուածները՝ էլ չենք ասում աւարտուն մենագրութիւնների մասին): Առանձնապէս ըմբռստանում էր Հայաստանից յայտնաբերուած պեղածոյ արժէքներ երկրից դուրս բերելու դէմ, պահանջում էր կազմել նախկին կայսրութեան հանրապետութիւններ, յատկապէս Ռուսաստան («Երմիտաժ» եւ Պուշկինի անուան թանգարան) եւ

Վրաստան տեղափոխուած պատմամշակութային արժեքների գիտացուցակները՝ դրանք անյապաղ հայրենիք վերադարձնելու համար։ Նրա ջանքերով ճեւաւորուած հասարակական կարծիքի ճնշմամբ 1970ականների կէսերից նման դէպքերը հասցուեցին նուազագոյնի։

Անզիջում էր նաեւ պեղածոյ յուշարձանների պահպանութեան խնդրում։ Հանրապետութեան մամուլում տպագրած յօդուածներով հորդորում էր պեղման նպատակով յուշարձանը բացելուց յետոյ բախտի քմահաճոյքին չթողնել, այլ պեղման գումարների մէջ նախատեսել նաեւ յուշարձանը պեղելուց անմիջապէս յետոյ ամրակայելու (կոնսերվացիա) եւ պահպանելու համար նախատեսող ծախսեր։ Այս հարցում իր դաւանանքն էր «եթէ յուշարձանը չպիտի կարողանանք պահել, չպիտի՝ պեղենք»։ Մի խօսքով՝ իր ազնուական ու վսեմ խառնուածքով, պատկառանք ներշնչող էութեամբ նա եղաւ հայ գիտնականի արժանապատուութիւնը ամրակայող ու պահպանող եզակի անհատներից մէկը այդ դժուար ժամանակներում։

Մ. Խորայէլեանը նաեւ ազգային գործիչ էր՝ այս հասկացողութեան ամբողջ տարողութեամբ։ Իր սերնդի մեր լաւագոյն մտաւորականներ Արտաշէս Վրոյրի, Սուրէն Երեմեանի, Վիրապ Մանուկեանի, Գուրգէն Արմաղանեանի, Նիկոլ Կարապետեանի, Ասատուր Մնացականեանի, Յովհաննէս Բագրատ Ովուրաբեանի եւ այլոց հետ կազմակերպում էր Հայաստանի ազգային մտաւորականութեան ինքնապաշտանութիւնը բռնի ուժացման, հայոց դպրոցներն ու մանկապարտէզները ապազգայնացնելու, հայերէնը որպէս գրագրութեան լեզու պետական հիմնարկներից վտարելու դէմ, պայքարում արգելուած ազգային հերոսներին, գրողներին ու կրթամշակութային գործիչների ժողովրդին վերադարձնելու, բազմութիւնների պատմական յիշողութիւնը արթուն պահելու համար։ Առանձնակի կրքուտութեամբ էր պաշտպանում հայոց ցեղասպանութիւնը միջազգայնօրէն պաշտօնապէս ճանաչել տալու եւ հայ ժողովրդի բռնազաւթուած տարածքները, առաջին հերթին Արցախն ու Նախիջեւանը Խորհրդային Հայաստանին վերամիաւորելու դատը։